

## Աղոթք «դիմում»-ից ազատագրվելու համար

Հա՛յր, ես համաձայն եմ քեզ հետ, որ վախի ենթակա չեմ, այլ քո սիրո զավակն եմ: Ես մերժում եմ իսլամի պահանջները, որ Մուհամեդն էր ուսուցանում, և հրաժարվում եմ դրանցից: Ես հրաժարվում եմ որևէ կերպ հպատակվել «Ղուրանի Ալլահին» և հռչակում եմ, որ ես պաշտում եմ միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստծուն:

Մենք գղջում ենք մեր հայրերի մեղքերի համար, որ ընդունել են «դիմում»-ի դաշինքն ու դրա սկզբունքները, և նրանց մեղքերի համար քո ներողությունն ենք խնդրում:

Ես հրաժարվում եմ իսլամական համայնքի և իսլամի սկզբունքների հետ իմ կամ իմ հայրերի կապած հպատակության ամեն դաշինքից:

Ես լիովին մերժում եմ «դիմում»-ն և դրա ամեն մի պայման, ես մերժում եմ զլուխը կտրելու ծեսն ու դրանից բխող ամեն ինչ, որ անում են «ջեզիե»-ի տուրքը տալիս: Ես մերժում եմ զլուխը կտրելու անեծքն ու դրա խորհրդանշած մահը:

Ես հռչակում եմ, որ «դիմում»-ի դաշինքն այժմ զամված է Քրիստոսի խաչին, որ այն հայտնապես խայտառակված է և ինձ վրա ոչ մի գորություն կամ իրավունք այլևս չունի: Ես հռչակում եմ, որ «դիմում»-ի հոգևոր սկզբունքներն այժմ մերկացված են, անգոր, պարտված ու անարգված Քրիստոսի խաչի միջոցով:

Ես հրաժարվում եմ իսլամի հանդեպ երախտապարտության կեղծ զգացումից:

Ես հրաժարվում եմ մեղավորության կեղծ զգացումից:

Ես հրաժարվում եմ խաբկանքից ու ստից:

Ես հրաժարվում եմ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը լուռ պահելու բոլոր համաձայնություններից:

Ես հրաժարվում եմ «դիմում»-ի և իսլամի մասին լուռ մնալու բոլոր համաձայնություններից:

Ես ամեն ինչ կասեմ ու լուռ չեմ մնա:

Ես հռչակում եմ, որ «Ճշմարտությունն ինձ ազատ կանի» (Հովհ. 8.32) և ընտրում եմ ապրել որպես ազատ մարդ Քրիստոս Հիսուսով:

Ես մերժում ու ջնջում եմ իսլամի անունից իմ և իմ ընտանիքի դեմ ասած բոլոր անեծքներն ու դեմ կանգնում դրանց: Ես մերժում ու ջնջում եմ իմ նախնիների դեմ ասած բոլոր անեծքները:

Ես հատկապես մերժում ու ջնջում եմ մահվան անեծքը: Մա՛հ, դու ինձ վրա ոչ մի իշխանություն չունես:

Ես հռչակում եմ, որ այս անեծքներն ինձ վրա իշխանություն չունեն:

Ես դավանում եմ, որ Քրիստոսի օրհնությունն է իմ հոգևոր ժառանգությունը:

Ես հրաժարվում եմ վախից ու որոշում եմ համարձակ լինել Քրիստոս Հիսուսով:

Ես հրաժարվում եմ շահարկումներից ու վերահսկումներից:

Ես հրաժարվում եմ չարաշահումներից ու բռնություններից:

Ես հրաժարվում եմ վախից: Ես հրաժարվում եմ մերժված լինելու վախից: Ես հրաժարվում եմ իմ ունեցվածքը կորցնելու վախից: Ես հրաժարվում եմ աղքատության վախից: Ես հրաժարվում եմ ստրկության վախից: Ես հրաժարվում եմ բռնաբարության վախից: Ես հրաժարվում եմ մեկուսացվելու վախից: Ես հրաժարվում եմ իմ ընտանիքը կորցնելու վախից: Ես հրաժարվում եմ սպանվելու վախից և մահվան վախից:

Ես հրաժարվում եմ իսլամի վախից: Ես հրաժարվում եմ մուսուլմանների վախից:

Ես հրաժարվում եմ հանրային կամ քաղաքական գործերում մասնակցելու վախից:

Ես հռչակում եմ, որ Հիսուս Քրիստոս Տեր է ամեն մեկի և ամեն ինչի վրա:

Ես հանձնվում եմ Հիսուսին ու հռչակում, որ իմ կյանքի ամեն բնագավառում նա է Տերը: Հիսուս Քրիստոս իմ տան Տերն է: Հիսուս Քրիստոս իմ քաղաքի Տերն է: Հիսուս Քրիստոս իմ երկրի Տերն է: Հիսուս Քրիստոս բոլոր ժողովուրդների Տերն է: Ես հանձնվում եմ Հիսուս Քրիստոսին. նա իմ Տերն է:

Ես հրաժարվում եմ ստորացումից: Ես հռչակում եմ, որ Քրիստոս ինձ ընդունել է: Ես ծառայում եմ նրան ու միմիայն նրան:

Ես հրաժարվում եմ ամոթից: Ես հռչակում եմ, որ խաչի միջոցով ես մաքրված եմ բոլոր մեղքերից: Ամոթն ինձ վրա ոչ մի իրավունք չունի և ես Քրիստոսի հետ պիտի իշխեմ փառքով:

Տե՛ր, ների՛ր ինձ ու իմ բոլոր նախնիներին, որ ատել են մուսուլմաններին: Ես հրաժարվում եմ մուսուլմանների և այլ ժողովրդների հանդեպ ամեն տեսակ ատելությունից: Ես հռչակում եմ Քրիստոսի սերը մուսուլմանների և այլ ժողովուրդների հանդեպ:

Ես գղջում եմ եկեղեցու գործած բոլոր մեղքերից և եկեղեցու առաջնորդների ընդունած սխալ հպատակություններից:

Ես հրաժարվում եմ մեկուսացումից: Ես հռչակում եմ, որ Քրիստոսի միջոցով Աստված ինձ ներել է ու ընդունել: Ես հաշտված եմ Աստծո հետ: Աստծո գահի առջև ոչ մի երկնային կամ երկրային գորություն չի կարող ինձ մեղադրել:

Ես հոչակում եմ, որ փառք ու գոհություն եմ տալիս մեր Հայր Աստծուն, իմ միակ Փրկիչ Քրիստոսին և Սուրբ Հոգուն, որ ինձ կյանք է տալիս:

Ես որոշում եմ Տեր Հիսուս Քրիստոսի կենդանի վկան լինել: Ես նրա խաչից չեմ ամաչում: Ես նրա հարությունից չեմ ամաչում:

Ես հոչակում եմ, որ կենդանի Աստծո՝ Աբրահամի, Իսահակի ու Հակոբի Աստծո զավակն եմ:

Ես հոչակում եմ Աստծու և նրա Մեսիայի հաղթանակը: Ես հոչակում եմ, որ ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կդավանի, որ Հիսուս Քրիստոս Տեր է՝ ի փառք Հայր Աստծո:

Ես հոչակում եմ, որ ներում եմ մուսուլմաններին «դիմաճի»-ության մեջ մասնակից լինելու համար:

Հա՛յր Աստված, խնդրում եմ ազատի՛ր ինձ «դիմաճա»-յից, «դիմաճի»-ության ոգուց և «դիմաճի»-ության դաշինքի հետ կապված ամեն անարգ սկզբունքից:

Ես հիմա խնդրում եմ, որ ինձ Սուրբ Հոգով լցնես և իմ վրա թափես Հիսուս Քրիստոսի Արքայության բոլոր օրհնությունները: Ինձ շնորհք տուր՝ հասկանալու քո Խոսքի ճշմարտությունը և կիրառելու այն իմ կյանքի բոլոր կողմերում: Շնորհի՛ր ինձ հույսի և կյանքի խոսքեր, ինչպես խոստացել ես, և օրհնի՛ր իմ շրթունքները, որ այս խոսքերն ուրիշներին ասեմ իշխանությամբ և Հիսուսի անվան գործությամբ: Քաջությո՛ւն տուր ինձ Քրիստոսի հավատարիմ վկան լինելու: Շնորհի՛ր ինձ մի խոր սեր մուսուլմանների հանդեպ և խոր փափագ վկայելու նրանց Քրիստոսի սիրո մասին:

Ես հոչակում և խնդրում եմ այս ամենը իմ Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն: